

«Յիթը գլխանի զեին մէկը ինչոյ զսի մէ աղիմ՝ յառըթին զըյնի, որդանէ կը: Ետք նշանածը շատ զուայ էրէբայ կը, կաշէ կ'օր առաջ բան չի ըսի, զըբըբ փօթէ՝ աղամարդու զըբիս կը մանի, հեծնի կը քեանհան միմ՝ ու մղրախը կառնէ մեաքը, կերթայ օր զեին գանի վրէժը առնէ: Էազմ կերթայ, նամփան էրիսու հարամի առաջ զուգան: Ետանք զուգան օր առաջ վրայ աան, հըմը աթիկ օր մղրախը չի յաղցնէ, ու առանցէն մէկին նահաթին զնէ՝ տեղն ու տեղը կը մնայ: Մէկալը մեաք ու վտար զըյնի, չիտէ հոգին վեր ծախը զնէ օր փրկէ: Եսիկ կառնէ առաջ հեաք՝ կերթայ, Կերթան օխթը գլխանի զեի զոնախանիմ՝ հասնին կը: Ետ կ'իկիը կըտէ հարամուն թը՝ միանը առանց բռնէ կեցի, ես կերթամ անոր հետ կուսիմ, թէպէտք անոր այթ էրի, ինթիթանս (գրէմ) առայ, մէ օթմ՝ կ'ենեմ, կեցի, թըլը՝ թող ու փախի, գլխաւ պրծու: Կաշին օր առ զեին զոնախանան հէջ մէ կողմէմ՝ զուս չունի, մէկնայ վերը մէ փանճիբամ՝ կայ: Թաժայ հարաք կըտէ հարամուն թը՝ առ իսի մեկըը զարկ պատին օր բռնեմ վեր էլլեմ: Են ա զոնս քարմ կառնէ՝ զարնէ զարնէ՝ մէ մըթմ՝ բիլա չի կըմայ զարնէ: Հարաք կառնէ մեկըը, մեարօզը զարնէ ու վեր զեկէ: Վեր զեկէ՝ փանճիթեցէն մանի կը նեօ, կաշէ՝ զեք նստիք է, քաշէ կը թուրն ու առաջ օրթայի գլխուն օր չի զարնէ, արունը չայի զէս չառայ կը: զլսիք զըբի, փանճիթեցէն վար զըյնի կը: Հարաք կայնի անպէս մէ օթմ՝ քաշէ կ'օր, առայ աշխարհըը մէն հուսայ: Կիշնի վար, կըտէ հարամուն թը՝ առ զարնէ կերթանք: Հարամին կաշխարի, կաշխարի, տեղէն բիլա չի կըմայ վերջընէ: Հարաք զեին անկճեմերը կը կառնէ, ջիկէ կը հապիկան, կերթան: Կերթան առաջ մարթուն զերեզմին քօզը, զերեզմանը բանան կը: Հարաք կըտէ հարամուն թը՝ առայ զառառաքնին պարաքիան մնա՝ թէպէտք ինծի առանց չիթաղես: Տիա միօ, զեին յաղման, իմ զեօզլաթօ քեզի փեշքեաշ, կըտէ ու թուրը տնկէ կը զերեզմին մէջը՝ զըյնի վրան, փաթթուի կը մարդուն ու մեանի կը: Հարամին հողը վրաները հուսայ:

**ՍՈՒՍՈՐՎՈՒՆԻՐՈՒՄԻՆ, ՀՈՒՍՍՈՒՆԻՐՈՒՄԻՆ, ՓՈՒՆՎՈՒՆԻՐՈՒՄԻՆ ԵՐԵՎԱՆԻՆԻՐՈՒՄԻՆ ԵՆ ԲՆՈՒԹԵՆ ԹՈՒՍՈՐՈՒՄԻՆԻՆԵՐԻ ՄՈՍԻՆ.**

Աշխարհի, նախամարդոց, ազգերի, լիզունների ծագման մասին Ախայքալաքի Հայ Ժողովուրդը գիտէ միայն Ս. Գրքի պատմանը: Միայն որս վերայ աւելացնում է, թէ՛ երբ Առաւուծ բաժանեց երկինքն ու երկիրը՝ չրի մի մասն երկնքում մնաց,

մնացածը կազմեցին Հեռեհալ չորս գետերը՝ Մուրառ լայ (Նփրառ), Գուռ (Կուր), Արագ, (Արաքս) և Սև ջուր:

Նրկինքը եօթը շաբթի—շերտ է. առաջին շերտն ամոլ է, միւսները ջուր: Նրկինքի ծայրը և վերջը սփկածի վրայ է գրուած:

Նրկնային ժարմիններից արևն ու լուսինը քոյր և եղբայր են: Մի անգամ քոյրը, արևը՝ ասել է եղբորը. «ես գիշերը կը վախենամ ման գալուց, իսկ ցերեկը կամաչեմ, երբ ինձ նայեն»: Այն ժամանակ եղբայրը տուել է բոջը մի թոփ ասեղ և ասել. «Դու ցերեկը ման եկ, և եթէ քեզ նայեն՝ ասեղները ցցիք նայողի աչքերը, իսկ ես գիշերը ման կը գամ»:

Մի ուրիշ աւանգութիւն ասում է. թէ արևն աղջիկ, լուսինը մանչ է. երբ իրար պատահում են, լուսնի խելքը անցնում, խաւարում է. Լուսնի ճիւղն էլ մի արիւնտա արկ կայ. սա էլ երբեմն արկը ձգում է արևի վրին, որից նա է խաւարում:

Արևն ամէն օր ծագում և երեկոյեան մայր է մանում, գնում մօր սփկածի մէջ հանգստանում է, առաւօտ նորից ծագելու և պատուելու աշխարհիս շուրջը:

Արևը մայր մանելուց թառոյ գետինը խալուած են համարում, զբա համար էլ շին փորում:

Նրկինքի անհամար աստղերից իւրաքանչիւրը պատկանում է մի մարդու և երբ սրա վախճանը հասնում է՝ աստղը վայր է ընկնում: Սրանց մէջ կան և՛ պոչով—գիտաւոր—աստղեր, որոնց երևալը պատերազմ լինելու կամ թագաւոր մեռնելու նշան է համարում:

Բոյր աստղերն երկու տեսակ են լինում, բարի և չար: Բարի աստղի տակ ծնածը՝ երջանիկ, չարինը գժբազդ է լինում:

Աստղերը կարող են զօրութիւն, իմաստութիւն տալ մարդկանց: Գիւմիւրգեցի մի հովիւ մրտում է, տանում են տուն. ճանապարհին մի քարի փռսի մէջ հաւաքուած ջրից խմում է: Գիշերը երագում լսանում են թէ զու սրբացար, սրովհետև խմեցիք այն ջուրը, որի մէջ զարկել էր աստղը: Միևնոյն ժա-

մանակ արգելում են նրան ամուսնանալ։ Աս ժամակոչ է դառնում և ամէն ինչ գուշակում է։ Մինչ իսկ պառկում է գերեզմանների մօտ և իմանում, թէ ներքեցեալները քրիստոնէայ են եղած թէ կռայաշա։

Առաջերի մէջ երևում է Սանտօր իզը. ժամանակով սանամէրը կնքաւորի մարագից յարգ է գողացել, բայց գողնոցը ծակ լինելով, թափուել է և շիզըս—հեաքը—մնացել երկընթում։

Մի ալլ աւանդութիւն ասում է, թէ սանամէրը լոկ անցել է կնքաւորի երգիկից և որովհետև սա մեծ մեղք է համարում, այդ պատճառով նրա հեաքը գրոշմուել է երկընթում։

Մի ուրիշ աւանդութիւն էլ յարգգողի հանապարհին երկընթի պատառք կամ կար է անուանում։ Իբր Ջրհեղեղի ժամանակ պատառուել և այդտեղից ջուրը թափուել է երկիր։

Ծիածանի մասին էլ պատմում են, թէ զա Աստու գտին է։ Գարրիէլ և Միքայէլ Հրեշտակապետները ասում Աստու մէջքը կապում, ցոյց են տալիս մեզ, թէ տեղէք, Վասու արքայութիւնը մեզնէն չէ պաքսէ, յետոյ դարձեալ քանդում պահում են։ Այս պատճառով և՛ ծիածանը տեսնելիս՝ խաչակնքում են, շնորհակալ լինելով Աստուածանից նրա ողորմութեան համար։

Բայց այդ գեղեցիկ լուսալիբ երկնքից երբեմն ցայտում է Վասու կրակըս—կայծակ—չար մարդկանց խփելու։

Այդ գեղեցիկ երկնքի վերայով քառամի կառքը նստած ձեմում է Եզիա մարգարէն, որի կառքի անիւներից յառաջանում է (ամպի) գուռոց և մարակի զարկից՝ կայծակ։ Այդ ընդարձակ երկնքի վերայ Հրեշտակները շխիթթ են խաղում և մեռքերի ջիլիթներով խփում սատանաներէն։ Սրանք էլ ազատուելու նպատակով մարդկանց մօտ են վազում, նրանց թեւի տակ մտնում։ Եւ եթէ մարգը խաչ չը հանէ երեսին, որ սատանաները հեռանան իրենից, Հրեշտակները կը խփեն թէ սատանային և թէ մարդուն։

Այս պատճառով էլ կայծակի ժամանակ շարունակ խա-

չակնքուելով ծառի, գէղի, սայլի, քարի տակ են մտնում, իբր, պաշտպանուելու:

Կայծակից, ժողովրդեան խօսքով, կեծակից, Աստու կրակից, լառաբացած հրդեհը մեզաց պատուհաս և ուժից բարձր համարելով չեն աշխատում հանգցնել:

Կայծակը մի կիզացեալ երկաթ է, հրեշտակների ձեռքի շիւթիթը, որ երկնքից ընկնում, մտնում է գետնի մէջ, և թէ այս երկաթը գտնեն և գրանից թուր շինեն, այս ժամանակ այդ կայծակի թուրն ոչ միայն մի փարսելով հազար մարդ կը սպանէ, ամէն ինչ, քար, երկաթ, մետաղ կը կարէ, այլ և խփած միջոցին ինքն իրեն կ'երկարի և կը հասնի նպատակին: Եթէ նրան հոգևարք հիւանդի մօտ գնեն, նրա զօրութիւնով կառողջանայ նա: Կայծակի կարապետող փայլակն էլ սփկեանի միջի Լէկէտն ձկան կրծքի փայլն է:

Հողագունտը, ժողովրդի կարծիքով, մի կլոր բան է, մի կարմիր եզի եզիբւրին անշարժ կանգնած: Եզի մօտ կայ և մի ճանն, երբ սա Աստուծոյ հրամանով մեր մեզաց համար կանգնում է եզի պնդին, եզը շարժում է գլուխը, որից և երկրաշարժ է լինում: Երբմէն էլ երկիրը ծակում է և քամին մտնում մէջը, որից և ժամ է գալիս:

Գիւղացու կեանքը սերտ կապուած է հողի հետ, որովհետև նրանից է ստանում իւր սնունդն ու ապրուստը: Առտի և սաստիկ սիրում են հողը: Վերջում, հողիս ու ջրիս մեռնիմ, սառնում են նրանք, պիտի ըլլի որ մէ որմ՝ զամ հողըս լիղեմ: Վրա աշեմ այդի գեանին, երգում են նրանք:

Եսա հիւանդներ պանդխտութեան մէջ իրենց գիւղի ջրից բերել են տայիս և խմում:

Ժողովրդի կարծիքով Եզիայի չորս կողմը չորս օգնական են նստած, որոնք սրա հրամանով ամպերը ուռեցնում են պիտուութեան ձեռք, վայր իջեցնում, որ ծովից ջուր խմէ, յետոյ բարձրացնում, որ անձրևէ: Հովի Մարտիրոսն ուզում էր հաւատացնել, թէ ինքը տեսել է որ ամպն իջել Փարուանայ լճի վրայ ջուր խմել, բարձրացել Ս. Յովհաննէս վանքի վերայ անձրևել է:

Քամին ժողովրդի կարծիքով յառաջացել է նոյ նահապետի ազդիկների սրնդից: Ոմանք էլ ասում են, թէ չորս հրեշտակ, կանգնած աշխարհիս չորս կողմը, փչում են, որից և յառաջանում է քամի:

Քամին զիւղացիների համար անհրաժեշտ մի բան է: Աւանդութիւնն ասում է, թէ մինը թագաւորից գնել է քամին. թեղի ժամանակ բոլոր զիւղացիները հաւաքուել են թագաւորի մօտ և մեծ զին տալով, աշաշեւով յետ են գնել, որովհետև առանց քամու նրանք չեն կարող թեղ անել—ցորենը յարգից մաքրել:

Եթէ երկու քամի միմեանց հակառակ փչելով ուղորայրատոյս վեր են բարձրացնում թեթեւ իրեր, կուլում են աստանի քամի:

Փոքրիկ թաթառներ, որ երբեմն գոյանում են Ախալքալաքի լճերի վրայ, կուլում են ուշապ: Ժողովրդի կարծիքով ուշապը մի ստրտափելի վիշապ է, որ շղթաներով կապուած է երկնքից, գլուխը վեր, պոչը վայր: Սա գոյանում է եղնիկից: Նրբ եղնիկը ծնում է, մայրը թողնում մի ժամուայ ճանապարհ փախչում է, ուշապները իջնում, սրան երկինք են քաշում, ուր մեծանալով նա էլ է դառնում ուշապ. իսկ եթէ չիջան, երեք ժամից յետոյ սա վեր է ելնում, կանգնում, այս ժամանակ մայրը տեսնում, գալիս պահում է:

Անցեալ տարի Խանջալուի լճի վրայ իջաւ. նախ ամպերի միջից ցոյց տուեց գորհուրելի գլուխը, ապա պոչը վայր պարզեց և ցեխը ջրին խառնեց:

Եթէ սրա շղթաները արձակուին, սա կը կործանէ աշխարհը, իսկ եթէ գլուխը վայր կախուի՝ կը կործանուի աշխարհը:

Արձազանքի մասին ժողովուրդը հետևեալ կարծիքն ունի. կան սարեր, որոնց մէջը ջրով լիքն է, ահա գրանք են ձայն հանում: